ԲԱԺԻՆ 2. ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
РАЗДЕЛ 2: ОБУЧЕНИЕ И ВОСПИТАНИЕ
SECTION 2: TEACHING AND UPBRINGING

DOI: 10.46991/ai.2022.8.79 **https://orcid.org/0000-0002-9914-8878**

FUNCTIONS OF SOCIAL ECOLOGY IN THE FIELD OF PUBLIC EDUCATION

Minasyan Gohar
Applicant
Shirak State University, Armenia
gsminasyan92@mail.ru

Summary

Keywords: Social ecology, functions of social ecology, patterns of social ecology, contradictions in the development of ecological problems, social ecological knowledge.

The purpose of the research carried out within the framework of the article is to analyze the functions of social ecology in the field of general education and to justify that there are necessary prerequisites for the inclusion of knowledge about social ecology in public school.

The analysis of the functions of social ecology will show that students can acquire knowledge about social ecology during classroom hours by including relevant topics in the plans of teachers by adding a new component to the "ecology" course. Regarding the social, ecological, and valeological challenges of the time, this type of education will become an important part of a solution and contribute to the students' healthy socialization.

The functions of social ecology are as follows: economic and legal, developing-promoting, valeological behavior and aesthetic taste formation of students, providing feedback, and prediction and prevention functions. Each function has its own importance for the development of the sector.

The analysis emphasizes the importance of our social ecological knowledge. With digitalization and changing communication mechanisms in society, the system of relationships also changes.

Conclusion. The analysis shows that the students' knowledge of social ecology is relevant in our country. It promotes and develops students' approaches to the complete system of nature-society, valeological behavioral changes, and valuing nature in maintaining society.

Learners can acquire knowledge about social ecology during classroom hours, as a result of the appropriate plan, instructions, and ecology textbook.

ФУНКЦИИ СОЦИАЛЬНОЙ ЭКОЛОГИИ В СФЕРЕ ОБЩЕГО ОБРАЗОВАНИЯ

Минасян Гоар
Соискатель
Ширакский государственный университет, Армения
gsminasyan92@mail.ru

Аннотация

Ключевые слова: социальная экология, функции социальной экологии, закономерности социальной экологии, противоречия в развитии экологических проблем, познание социальной экологии.

Целью исследования, проводимого в рамках данной статьи, является анализ функций социальной экологии в сфере общего образования и обоснование наличия необходимых предпосылок для внедрения знаний о социальной экологии в общеобразовательной школе.

Анализ функций социальной экологии в общеобразовательной сфере позволит обосновать, что знания в области социальной экологии учащиеся могут получать во время классных часов (включая в тематические рабочие планы классных руководителей темы по социальной экологии) и в старшей школе путем добавления нового составляющего в курс «Экология». С точки зрения противостояния вызовам социального, экологического, валеологического характера будет подчеркнута важность социально-экологического образования учащихся, которая будет способствовать процессу их социализации.

Научная новизна исследования: анализ функций социальной экологии в общеобразовательной школе.

В сфере общего образования можно выделить следующие функции социальной экологии: экономико-правовая, развивающая-мотивирующая, формирование валеологического поведения и эстетического вкуса учащихся, обеспечение обратной связи, прогнозирование и предупреждение. Каждая из указанных функций имеет определенную важность для

развития рассматриваемой сферы. Благодаря анализу функций социальной экологии в общеобразовательной сфере можно подчеркивнуть важность познания социальной экологии среди нас, т.к. в условиях всеобщей информатизации, изменения механизмов и форм общения внутри общества, меняется также система взаимоотношений.

Заключение: Анализ функций социальной экологии в сфере общего образования позволяет констатировать тот факт, что приобретение знаний в области социальной экологии является весьма актуальной задачей, решение которой позволит стимулировать и развивать подходы учащихся к целостной системе природа-общество, изменения валеологического поведения, подчеркнуть важность природы в деле сохранения самого существования общества. Знания в области социальной экологии учащиеся могут приобретать во время классных часов путем внесения соответствующих изменений в тематический план и методические инструкции, а также в учебник по экологии путем внесения соответствующего составляющего.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Մինասյան Գոհար
հայցորդ
Շիրակի պետական համալսարան, Հայաստան
gsminasyan92@mail.ru

Համառոտ ներածական: *Բնության ու հասարակության միջև առկա դիալեկտիկական միասնությունը հնարավորություն է տալիս լուծելու փոխգործակցության մի շարք խնդիրներ, որոնց լուծմանը մասնակցում են միջգիտական ուղղությունների մի ամբողջ համալիր: Այսօր չկա որևէ կոնկրետ գիտաճյուղ, որը կարող է ամբողջությամբ իր վրա վերցնել հասարակություն-բնություն շարժուն համակարգում առկա բարդ մեխանիզմների կատարելագործմանն ուղղված բոլոր խնդիրների լուծումը՝ հաշվի առնելով դրանց բազմակողմանիությունը, յուրահատկությունն ու բազմազանությունը: Այս տեսանկյունից ներկայումս կարևորվում է «Սոցիալական էկոլոգիա» գիտաճյուղը, որը բուռն զարգացում ունի ՌԴ-ում և կարծում ենք զարգացման հեռանկարներ կունենա նաև մեզանում:*

Բանալի բառեր: *Սոցիալական էկոլոգիա, սոցիալական էկոլոգիայի գործառույթներ, սոցիալական էկոլոգիայի օրինաչափություններ, էկոլոգիական խնդիրների զարգացման հակասություններ, սոցիալական էկոլոգիական գիտելիք:*

Հիմնախնդիրը: Հանրակրթության ոլորտում սոցիալական էկոլոգիայի գործառույթների վերլուծությունը հնարավորություն կտա հիմնավորելու, որ սոցիալական էկոլոգիայի վերաբերյալ գիտելիքներ սովորողները կարող են ձեռք բերել դասղեկական ժամերին (դասղեկների թեմատիկ աշխատանքային պլաններում ներառելով սոցիալական էկոլոգիայի վերաբերյալ թեմաներ) և ավագ դպրոցում՝ «էկոլոգիա» դասընթացում ավելացնելով նոր բաղադրիչ: Ժամանակի սոցիալական, էկոլոգիական, վալելոգիական մարտահրավերներին դիմակայելու տեսանկյունից կկարևորվի սովորողների սոցիալական էկոլոգիական կրթությունը, որը կնպաստի սովորողների սոցիալականացման գործընթացին:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտություններ: Հիմնախնդրին առնչվող մտքեր, տեսակետներ արտահայտվել են տարբեր դարաշրջաններում՝ ներառելով սոցիալական էկոլոգիային վերաբերող մոտեցումներ, իսկ առավել արդիական հետազոտություններ իրականացրել են Ն. Ռեյմերսը, Բ. Պրոխորովը, Բ. Խասկինը, Ե. Շիրովը, Բ. Սիտարովը, որոնք քննարկել են սոցիալական էկոլոգիայի տարբեր հիմնախնդիրներ՝ հաշվի առնելով դրանց առաջացման պատճառները, հետևանքները, կանխատեսվող արդյունքները:

Հետազոտության մեթոդները: Հետազոտության ընթացքում կիրառվել են զրույցի, հարցման և քննարկման մեթոդներ:

Հոդվածի շրջանակում իրականացվող հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է վերլուծել սոցիալական էկոլոգիայի գործառույթները հանրակրթության ոլորտում և հիմնավորել այն փաստը, որ ներկայումս հանրակրթական դպրոցներում կան անհրաժեշտ նախադրյալներ սոցիալական էկոլոգիայի վերաբերյալ գիտելիքների ներդրման համար:

Հետազոտության նորույթը սոցիալական էկոլոգիայի գործառույթների վերլուծությունն է հանրակրթական ոլորտում:

Հետազոտության տեսական նշանակությունն այն է, որ ուսումնասիրվել և վերլուծվել են սոցիալական էկոլոգիայի գործառույթները հանրակրթության ոլորտում։

Հետազոտության գործնական նշանակությունը։ Հիմնախնդրի վերլուծությունն ու առաջակությունները կարող են հետաքրքրական լինել սոցիալական էկոլոգիայով զբաղվողների համար։

Հիմնական նյութի շարադրանքը։ Կրթական բարեփոխումների արդյունքում կրթության բովանդակությունը հարստացավ այնպիսի ուսումնական առարկաներով, ինչպիսիք են «Ես և շրջական աշխարհը», «Հայրենագիտություն», «Հասարակագիտություն», «Բնագիտություն», «Առողջ ապրելակերպ», «Էկոլոգիա» ուսումնական առարկաները, որոնք մարդու ու բնության միջև առկա փոխհարաբերությունները ուսումնասիրող տարբեր գիտաճյուղերի հետ գտնվում էին սերտ փոխկապվածության մեջ։ Այս համատեքստում անչափ կարևորվում են սոցիալական էկոլոգիայի վերաբերյալ գիտելիքները, քանի որ դրանք հնարավորություն են տալիս սովորողներին համակարգային մոտեցմամբ ընկալելու ժամանակակից բնապահպանական խնդիրները՝ արդյունքում դրանք վերլուծելով սոցիալական, տնտեսական, տեխնոլոգիական, աշխարհագրական, բնապահպանական տեսանկյուններով։ «Ներկայումս շատ ենք խոսում բնություն-հասարակություն ներդաշնակության մասին, կրթության սոցիալական էկոլոգիացման մասին, ...սովորողների սոցիալական էկոլոգիայի գիտելիքների իմացության վերաբերյալ, այն կլուծի թե՛ բնության և թե՛ հասարակության մեջ առկա խնդիրները» [1, 11]։

Հաշվի առնելով Ն. Ռեյմերսի՝ մարդու սոցիալականացման ընթացքում էկոլոգիական մարդաբանական զարգացման 30 աքսիոմաները [3, 45], որոնց վերլուծությունը հնարավորությունն է տալիս, մի կողմից, ընկալելու բնություն-հասարակություն ամբողջականությունը, մյուս կողմից՝ երկու համակարգերի առանձնահատկությունները՝ հեղինակը «Էկոլոգիական մանիֆեստ» աշխատության մեջ քննարկում է երկրի, մարդկության վիճակը։ Նա կանխատեսում է, որ մարդկության էկոլոգիական խորքային գիտելիքների պակաս է նկատվում, և պահանջում է զգուշավոր իմաստություն, որի շնորհիվ կհաղթահարենք մարդու կողմից ստեղծված աղետալի իրավիճակները։

Ն. Ռեյմերսի կարծիքով բնությունն ունի հրամայական՝ վերականգնել ինքն իրեն, իսկ մարդը կունենա հատուկ խնամքի կարիք [2, 17]։ Եթե մենք հիմք ընդունենք Ն. Ռեյմերսի՝ գոյություն ունեցող սոցիալական էկոլոգիայի բազմաթիվ դասակարգումներից առավել ընդունված «մոդել-մատրիցա» [4, 20] մոտեցումը, համաձայն որի՝ մարդկությունն բազմամակարդակ համակարգ է, ապա սոցիալական էկոլոգիան կդիտարկվի «Մարդու էկոլոգիայի» բաղադրիչային կառուցամաս, որի ուսումնասիրության առարկան «հասարակություն-բնություն» համակարգերի փոխհարաբերություններն են։

Ներկայումս այս համակարգում առաջացող բնապահպանական խնդիրների պատճառները նաև սոցիալական են։ Սոցիալական հարաբերությունների փոփոխությունները հանգեցնում են բնապահպանական փոփոխությունների։ Երկու համակարգերը դարձելի են. բնապահպանական փոփոխությունները նույնպես բերում են սոցիալական հարաբերությունների փոփոխությունների։ Սովորողները «հասարակություն-բնություն» համակարգերի վերաբերյալ գիտելիքներ ստանում են վերը թվարկված առարկաներից մասնակի, ու հետևաբար ամբողջական պատկերացում չի ձևավորվում սոցիա-լական էկոլոգիայի վերաբերյալ։

Ներկայացված տեսակետը հիմնավորելու նպատակով անցկացրել ենք հետազոտություն 30 ուսուցիչների, 30 դասղեկների ու 20 դասվարների, շրջանում (10՝ «Էկոլոգիայի», 10՝ «Հասարակագիտության», 10՝ «Ես և շրջակա աշխարհը» առարկաները դասավանդողների շրջանում)։ Դասվարների, դասղեկների ու ուսուցիչների պնդմամբ բնության վերաբերյալ սովորողների հետաքրքրությունները առավել արտահայտված են տարրական դասարաններում, իսկ միջին ու ավագ դպրոցում սովորողներին հետաքրքրում են հասարակական հարաբերությունները, նրանք չեն կարևորում բնապահպանական փոփոխությունները։ Զրույցների ու քննարկումների արդյունքում մեր հարցադրմանը՝ արդյոք կարող է այդ բացը լրացվել սոցիալական էկոլոգիայի գիտելիքների ներառումով տարբեր ձևավաչափով ծրագրերում, տրվեցին հետևյալ պատասխանները. դասղեկների 67 %-ը կարծում է՝ «այո՛», եթե իրենց տրվեն մեթոդական ուղեցույց, թեմաներ, որոնք կքննարկեն դասղեկական ժամերի ընթացքում։ Դասվարների 55 %-ը կարծում է, որ կարիք չկա ծանրաբեռնելու սովորողներին՝ հաշվի առնելով նրանց տարիքային առանձահատկությունները, իսկ էկոլոգիայի ուսուցիչների 85 %-ի կարծիքով սոցիալական էկոլոգիայի թեմատիկ բաղադրիչի ներառումը դասագրքում կնպաստի սովորողների մոտիվացիայի բարձրացմանը։ Նրանք նշում են, որ սովորողները հետաքրքրված չեն «էկոլոգիա» առարկայով, քանի որ այս թեմայի վերաբերյալ թեստեր շատ քիչ են ներառված շտեմարաններում, և դրա մանրամասն ուսումնա-

սիրումը համարում են ժամանակի կորուստ՝ չնայած նրան, որ տարբեր ոլորտներին առնչվող էկոլոգիական թեմաներ ներառված են ոչ հոսքային դասարաններում դասավանդվող այնպիսի առարկաներում, ինչպիսիք են «քիմիան» ու «աշխարհագրությունը»: Այսինքն՝ այն թեմաները, որոնք բնագիտական հոսքում իրենց ուսումը շարունակող աշակերտները պետք է սովորեն և ուսումնասիրեն, առավել մանրամասն անցնում են մակերեսորեն, իսկ մյուս հոսքերում այս թեմաները ներկայացված են ավելի պատկերավոր, և աշակերտները գործնականորեն ու տեսականորեն ավելի շատ ու ծավալուն տեղեկատվություն են ստանում:

Եթե համանմանության օրինակով փորձենք կիրառել մեր կողմից ուսումնասիրված ՌԴ առաջավոր փորձը (ՌԴ-ում մեր մասնակցությունը սոցիալական էկոլոգիային նվիրված քննարկումներին, հեռավար դասերին, սեմինարներին ու գիտաժողովներին), կարծում ենք՝ մեզանում նույնպես հնարավոր է իրականացնել սոցիալական էկոլոգիական կրթություն:

Մեր կողմից կամավորության սկզբունքով նմանատիպ փորձ է արվել. յուրաքանչյուր դպրոցում ընտրվել է մեկ դասարան, որտեղ աշակերտների հետ մշակվել են «սոցիալական էկոլոգիա» առարկայի շրջանակում ուսումնասիրվող տարբեր թեմաներ, և դասարաններ, որտեղ ուսուցումը իրականացվել է ըստ ուսուցչի կողմից կազմված թեմատիկ ծրագրի: Առանձնացված դասարաններում, որտեղ ուսումնասիրվել է «սոցիալական էկոլոգիա» առարկան, թեմաների ընտրությունը կատարվել է՝ ինչպես հաշվի առնելով արդի էկոլոգիական խնդիրները, այնպես էլ ծրագրային նյութը: Աշակերտների հետ ձևավորել ու ստեղծել ենք «էկոդասարաններ», որտեղ աշակերտների համար հնարավորություն է ստեղծվել թեմաները ուսումնասիրելու ոչ միայն տեսաան, այլ նաև գործնական մակարդակով: Ցանկացած թեմա քննարկվել է՝ հիմնվելով առաջավոր փորձի, մոլորակում տիրող իրավիճակի, արդի պահանջների ու դրանց լուծմանն ուղղված եղանակների հիման վրա: Աշակերտների ոգևորվածությունը յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրությունից հետո այնքան էր մեծանում, որ նրանք սկսում էին իրենց նախագծերն ու ծրագրերը մշակել՝ իրենց համայնքում առկա այս կամ այն էկոլոգիական խնդիրը բարձրաձայնելու ու այդ խնդիրները լուծելու համար: Իսկ այն դասարաններում որտեղ ուսուցումը կատարվում էր ըստ ծրագրային նյութի, աշակերտները միայն յուրացնում էին իրենց այդ օրվա թեման՝ առանց խնդրի մեջ խորանալու ու դրանց լուծմանն ուղղված գործնական քայլերի բացակայության:

Սոցիալական էկոլոգիայի դասակարգումը բնագիտական առարկաների համակարգում տարբեր է, ինչով պայմանավորված է նաև սոցիալական էկոլոգիայի նպատակի, խնդիրների սահմանումը, սակայն ինչպիսի դասակարգում էլ տրվի, սոցիալական էկոլոգիայի ուսումնասիրության դաշտը բնություն-հասարակություն համակարգն է՝ իր բազմաբնույթ բաղադրիչներով, փոխհարաբերություններով ու գործառույթներով, որոնցում կարևորվում են ոչ միայն բնության պահպանությունը, էկոլոգիական հիմնախնդիրները, այլ նաև թե ինչ պայմաններում են ձևավորվել բնություն-հասարակություն հակասող, երբեմն մարդկության գոյի վտանգ ներկայացնող փոխհարաբերությունները:

Սոցիալական էկոլոգիայի գործառույթները հանրակրթության ոլորտում հետևյալն են՝ տնտեսահիրավական, զարգացնող-խթանող, սովորողների վալելոգիական վարքագծի և գեղագիտական ճաշակի ձևավորման, հետադարձ կապի ապահովման, կանխատեսման ու կանխարգելման գործառույթներ: Առավել մանրամասնորեն ծանոթանանք այդ գործառույթներին:

Տնտեսահիրավական գործառույթ: Այս գործառույթն ապահովում է օրենսդրության մեջ ամրագրված շրջակա միջավայրի պահպանության և հասարակության կողմից արդյունավետ բնօգտագործման ապահովման միջոցների ամբողջությունը: Գործառույթի հիմքում ընկած են բնություն-հասարակություն բնապահպանական իրավահարաբերությունների վրա ազդելու տնտեսական լծակներ, որոնցից յուրաքանչյուրը կանոնակարգվում է համապատասխան իրավական դաշտում: Շրջակա միջավայրի պահպանության տնտեսահիրավական մեխանիզմի տարրերն են՝

- բնօգտագործման ու շրջակա միջավայրի պահպանության պլանավորումն ու կանխատեսումը,
- շրջակա միջավայրի պահպանության ֆինանսավորումը,
- բնօգտագործման ու շրջակա միջավայրի աղտոտման համար վճարները,
- բնապահպանական ապահովագրությունը,
- բնօգտագործողների տնտեսական խթանման արտոնությունները:

Զարգացնող-խթանող գործառույթ: «Մարդկանց գործունեությունը, բնական ռեսուրսների օգտագործումը մեծ վնաս է հասցնում բուսական ու կենդանական աշխարհին, օդային, ջրային և հողային ավազանին, սակայն արդյունքում մարդը նույնպես դառնում է այդ միջավայրի և գործունեության զոհ» [2,

16]: Բնություն-հասարակություն համակարգի կարգավորման մեխանիզմները պետք է կրեն զարգացնող, խթանող բնույթ, հասարակությունը պետք է իր մարդածին գործունեությամբ խոր հակասություններ չստեղծի էկոլոգիական համակարգերի անդարձելի փոփոխությունների վրա նույնիսկ այն դեպքերում, երբ տնտեսական հետաքրքրությունները կարող են գերազանցել բնապահպանական օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Օրենքը սահմանում է բնօգտագործողների տնտեսական խթանման արտոնություններ, ինչը հնարավորություն է տալիս մարդկությանը փորձելու առավել խելամիտ օգտագործելու բնահարմարական ռեսուրսները:

Սովորողների վալելոգիական վարքագծի և գեղագիտական ճաշակի ձևավորման գործառույթ: Երկիր մոլորակի էկոլոգիական ճգնաժամային խնդիրներով հագեցվածության պայմաններում կարևորվում է սովորողների վալելոգիական վարքագիծը: Սովորողների առողջ ապրելակերպի վարքագծային դրսևորումների արդյունքում հնարավորություն է դառնում հաղթահարելու հասարակության մեջ տեղ գտած բազմաթիվ վնասակար սովորույթներ:

Սովորողների վալելոգիական վարքագծի վրա ազդում են մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններ: Սոցիալական էկոլոգիայի տեսակետից դրանք են՝

1. մշակութային միջավայրը, արժեքները, բարոյական դիրքորոշումները, միկրոսոցիումի առանձնահատկությունները,
2. սթրեսային գործոններն ու միջավայրը,
3. սոցիալական պայմանները [6, 32]:

Վարքագծում իր դրսևորում ունի նաև գեղագիտական ճաշակը, որը ձևավորվում է ընտանիքում, իսկ հաջորդիվ նաև այլ սոցիալական ինստիտուտներում: Բնահարմարության սկզբունքի համաձայն՝ գեղագիտական ճաշակի ձևավորման նախահիմք է բնությունը, սակայն բնություն-հասարակություն փոխհարաբերությունների փոփոխությունները նույնպես կարող են հանգեցնել գեղագիտական ճաշակի, արժեքային համակարգի վերաիմաստավորման, ինչը երբեմն միանշանակ չի ընկալվում:

Հետադարձ կապի ապահովման գործառույթ: Եթե դիտարկենք կենսագենետիկական օրենքը և փորձենք պատմական զարգացման մեջ քննարկել բնություն-հասարակություն զարգացման փուլերն ու օրինաչափությունները, այդ զարգացման ընթացքում առաջացող հակասությունները, ապա կնկատենք երկուսի միջև եղած հետադարձ կապերը: Այս երկու համակարգերը իրար փոխլրացնում են և միմյանց հետ սերտորեն փոխկապակցված են: Յուրաքանչյուր բաղադրիչի մոտ առաջացած որակական ու քանակական փոփոխությունները հանգեցնում են մյուս համակարգում փոփոխությունների, որոնցից շատերը կարող են անգամ անդարձելի լինել և վտանգավոր հետևանքներ ունենալ մարդկության հետագա գոյատևման համար:

Կանխատեսման գործառույթ: Այս գործառույթի շնորհիվ կանխատեսվում են բնություն-հասարակություն համակարգում ապագայում տեղի ունեցող այն ռիսկերն ու փոփոխությունները, որոնք կարող են վտանգել ոչ միայն բնությունը, այլ նաև հասարակական գործունեությունը: Այդպիսի ռիսկային կանխատեսումների թվին են պատկանում թագավարակի մուտացված տարբերակների հետագա բռնկումային ալիքների ազդեցությունը հասարակության լայն շրջանակներում: Կարելի է նաև կանխատեսել թե ինչ հիմնարար փոփոխությունների կհանգեցնի, օրինակ, արհեստական ինտելեկտի հետագա լայնածավալ կիրառությունը: «Կանխատեսելու համար պետք է տրամաբանական այլ կապեր տեսնել մարդաբանական հետազոտությունների միջև» [2, 20]:

Կանխարգելման գործառույթ: Առկա վտանգները կանխատեսելուց հետո այս գործառույթը ներառում է կանխարգելիչ միջոցառումների համակարգ, ինչը հնարավորություն է տալիս հավասարակշռության մեջ պահելու բնություն-հասարակություն համակարգում առկա բոլոր օրինաչափությունները:

Կանխարգելիչ միջոցառումների համակարգը պետք է կիրառել բնահարմարության ու բնօգտագործման բոլոր մակարդակներում, քանի որ էկոլոգիական համակարգի յուրաքանչյուր բաղադրիչի փոփոխությունը հանգեցնում է ընդհանուր համակարգի փոփոխությանը, իսկ էկոլոգիական համակարգի փոփոխությունը հետադարձ կապով առաջ է բերում նաև փոփոխություններ հասարակության մեջ: Գոյություն ունեն կանխարգելման փոփոխական գործակցով բազմաթիվ բանաձևեր, որոնք հաշվառում են ռիսկային գործոնները և ցուցչավորում, թե մարդու կախվածությունը ինչպիսին է շրջակա միջավայրից [5, 333]:

Կանխարգելման գործառույթի դեպքում ձևավորվում է այնպիսի համակցված համակարգ, որի բաղադրիչներն են՝

1. ռիսկերն ու դրանց հաշվառումը,

2. տեղային, էկոլոգիական, հիգիենիկ, սոցիալ - տնտեսական գործոնների հաշվառումը,

3. պլանավորումը, որը ներկայացնում է սոցիալական պատճառներով պայմանավորված միջավայրի որակի փոփոխության գնահատում՝ հնարավորության դեպքում նախնական համակարգի վերականգնմամբ:

Սոցիալական էկոլոգիայի ոլորտում ընթացող արագընթաց ու երբեմն թռիչքաձև փոփոխությունների շնորհիվ հետագայում վերևում նշված գործառույթները կլրացվեն և հնարավորություն կտան արագ ու դիպուկ արձագանքելու բնություն-հասարակություն համակարգում ընթացող իրավիճակային փոփոխություններին:

Հանրակրթության ոլորտում սոցիալական էկոլոգիայի գործառույթների վերլուծությունն ընդգծում է սոցիալական էկոլոգիական գիտելիքների իմացության կարևորությունը մեզանում, քանի որ թվայնացման, հասարակության հաղորդակցական մեխանիզմների, ձևերի փոփոխության պայմաններում փոխվում են նաև մարդ-բնություն-տեխնիկա համակարգերի փոխհարաբերությունները:

Եզրակացություն: Հանրակրթության ոլորտում սոցիալական էկոլոգիայի գործառույթների վերլուծությունը հնարավորություն է տալիս փաստելու, որ սովորողների սոցիալական էկոլոգիայի վերաբերյալ գիտելիքների իմացությունը մեզանում արդիական է, այն հնարավորություն կտա խթանելու ու զարգացնելու սովորողների բնություն-հասարակություն ամբողջական համակարգի վերաբերյալ մոտեցումները, վալելոգիական վարքագծային փոփոխությունները, արժևորելու բնության կարևորությունը հասարակության գոյի պահպանման գործում: Սոցիալական էկոլոգիայի վերաբերյալ սովորողները գիտելիքներ կարող են ձեռք բերել դասղեկական ժամերին համապատասխան թեմատիկ պլանի ու մեթոդական ցուցումների արդյունքում, ինչպես նաև էկոլոգիայի դասագրքում՝ համապատասխան բաղադրիչի ներառմամբ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Максимова Л.В., Опыт выявления каркаса основных понятий общей антропоэкологии // Эволюционная и историческая антропоэкология, М., 1987, 88 с.
2. Прохоров Б.Б., Экология человека, М., 2010, 320 с.
3. Реймерс Н.Ф., Экология (теория, законы, правила, принципы и гипотезы), М., 1994, 367 с.
4. Ситаров В.А., Пустовойтов В.В., Социальная экология, М., 2000, 280 с.
5. Хаскин В.В., Акимова Т.А., Трифонова Т.А., Экология человека-Экономика- Биота-среда, М., 2012, 495 с.
6. Шитова Е.В., Социальнаяэкология, Ярославль, 2010, 60 с.

Получено: 05.10.2022 *Received 05.10.2022*
Рассмотрено: 10.10.2022 *Reviewed 10.10.2022*
Принято: 18.10.2022 *Accepted 18.10.2022*

Journal ''Education in the 21st Century'', Vol. 1-8/2/, 2022

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Comercial 4.0 International License